ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՇԱՆՋՈՎ

ՍՏԵՂԾԵԼ ՆԳ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ ՋՈԿԱՏՆԵՐ

Հանրապետությունը ծանր, դժվարին օրեր է ապրում։ Հայաստանի շրջափակումը, որի հետևանքները դեռ երկար ըզգալ կտան իրենց, Ղարաբաղի պրոբլեմի ռահմանադրական լուծման հիվանդագին ձըգձըգումը, կենսականորեն կարևոր բազմաթիվ չլուծված հարցերը, տնտեսական դժվարությունները, ավելին՝ հաճախ նաև դրանց շուտափույթ հաղթահարման կայուն երաշխիքների բացակայությունը մարդկանց մեջ ծնել են սոցիալական և քաղաքական անբավարարության միանգամայն հասկանալի զգացումներ։ Ընտեսնել դրանք՝ նշանակում է ոչ միայն պարզապես անիրատես լինել, ինչի դառը պտուղներն այսօր ստիպված ենք ճաշակել, այլև վերադառնալ լճացման տխուր ժամանակներին, որոնցից, ճիշտըն ասած, դեռ կարգին չենք էլ ազատագրվել։

Այո՛, իրատեսությունը, փաստերի ու երևույթների, գաղափարների ու հայացքների ըմբռնումը այսօր պետք է դառնան մեր գործունեության հիմքը, ելակետը։ Մեզ պարզապես չի կարելի այլ կերպ վարվել, մենք ավազի վրա հենվող, պատրանքով սնվող կենսադիրք չունենք։ Եվ ուրախալի է, որ այս գիտակցությամբ մենք վերջապես մշակում ենք ազգային ծրագրեր, դանդաղորեն, բայց հաստատաքայլ գնում դեպի հանրապետական-համազգային համաչարփակ ծրագրի ստեղծումը, որը, համոզված ենք, կարևորագույն նշանաձող կդառնա մեր ժողովրդի նորօրյա պատմության մեջ։

Բայց այս ճանապարհին մենք չպետք է զանց առնենք նաև այլ քայլերի անհրաժեշտությունը։

Անտարակուսելի է, որ ներկայումս մեր հանրապետությունում ստեղծված ծայրահեղ լարված կացությունը թելադրում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև հասարակական կարգի հետագա ամրապնդման, այդ գործում աշխատավորական ամենատարբեր խավերի լայն ներգրավման, գործունեության նոր ձևերի ու մեթոդների արդյունավետ արմատավորման խնդիրներին։ Հարցադրումը առաջին հայացքից նոր չէ. հասարակական կարգի պահպանության և այդ գործին ժողովրդական զանգվածների ամենաակտիվ մասնակցության անհրաժեշտության ըմբռնումը եղել է միշտ։ Բայց խոսքն այստեղ սոսկ հնի թարմացման մասին չէ, ոչ էլ պարզապես այս ոլորտում անցյալում թույլ տրված թերությունների վերացման։ Խնդիրն այսօր դրվում է լայն պլանով. նկատի առնելով ներկայիս բարդ պայմանները, որոնց դեպքում հնարավոր են ոչ միայն հասարակական կարգի խախտումներ, ուղղակի ոտընձգություններ անձի և օրենքի նկատմամբ, այլև անկանխատեսելի ծայրահեղ արարքներ ու գործողություններ, պետք է ստեղծել այդ ամենի դեմ պայքարի համաժողովրդական միասնական ճակատ, որն ըստ ամենայնի վերահսկի օպերատիվ իրադրությունը ամբողջ հանրապետությունում։

Կարծում ենք, այդ ճակատի ստեղծման կազմակերպական առաջին քայլը պետք է լինի ներքին գործերի ծառայություններին, վարչական մարմիններին աջակցող հասարակական ստորաբաժանումների՝ աշխատավորական ջոկատների կազմավորումը։ Հասկանալի է, դրանցում պետք է ներգրավվեն գիտակից, կարգապահ մարդիկ, օրինականության և հասարակական կարգի պահպանության իսկական նվիրյալներ։ Նման ջոկատների ստեղծումը իրենց ձեռքը կարող են վերցնել կուսակցական, խորհրդային, կոմերիտական, ՆԳ մարմինները, իրենք՝ աշխատավորական կոլեկտիվները, որոնք պետք է ամենայն պատասխանատվությամբ կիրառեն գործողությունների կոորդինացման և վերահսկման իրենց լայն հնարավորությունները։

Նշենք, որ նման հարց վերջերս քննարկել և համապատասխան որոշում է ընդունել Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն։ Կարճ ժամանակում այստեղ միլիցիայի բաժիններ է ուղարկվել 1340 մարդ, որոնցից յուրաքանչյուր վեցերորդը ծառայել է Աֆղանստանում։ Նրանք ընդգրկված են պարետապահակային ծառայություններում ու տեղամասերում։ Այնուամենայնիվ, մեր խոսքը պարզ կրկնության մասին չէ և ոչ էլ, առավել ևս, ընդօրինակման։ Ընդհակառակը, մենք գտնում ենք, որ ՆԳ ծառայություններին աջակցող աշխատավորական ջոկատների ստեղծումը պետք է դիտել ավելի բարձր չափանիշներով, ընդհուպ մինչև համապատասխան օրենսդրական ակտերի կամ որոշումների ընդունումը։ **Ուստի, դիմելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդին, բոլոր դեպուտատներին, նպատակահարմար ենք համարում հարցը քննարկման դնել առաջիկա նստաշրջանում և ընդունել «Հանրապետությունում ՆԳ մարմիններին աջակցող հասարակական կարգի պահպանության աշխատավորական ջոկատների ստեղծման մասին» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշում։**